

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«14» հունիսի 2018թ. թիվ 3

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.***

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կողմից հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» թիվ 9 որոշմամբ հաստատված՝ Հատուցման գումարների վճարման կարգը (այսուհետ՝ Կարգ) լրացնել 9-ից 17-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

“9. Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը կայացնում է որոշում տվյալ զինծառայողին կամ այլ շահառուին նախապես՝ յուրաքանչյուր ամիս 100 հազար դրամ գումար վճարելու մասին, եթե Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային

անվտանգության ծառայությունը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Համապատասխան պետական մարմին) Հիմնադրամին գրավոր տեղեկացնում է, որ տվյալ զինծառայողի ստացած խեղումը կամ վնասվածքը կարող է հանգեցնել անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, ինչի հետևանքով նա կարող է ճանաչվել Օրենքով շահառու՝ ստորև նշված վնասվածքներից որևէ մեկի հետևանքով՝

- 1) ստամոքսի լրիվ հեռացում.
- 2) մեկ թոքի հեռացում.
- 3) անդամահատված ծայրատներ.
- 4) կոկորդի հեռացում.
- 5) միզապարկի հեռացում.
- 6) հաստ և ուղիղ աղու հեռացում՝ հակաբնական հետանցքի տեղադրումով.
- 7) երկու աչքերի անվերադարձ կուրություն.
- 8) երկու ականազնդերի բացակայություն.
- 9) Խլության առաջացում, խոսքի բացակայությամբ.
- 10) համակցված ողնաշար-ողնուղեղային վնասվածք տրավմա՝ ողնուղեղի սալջարդով և ողնուղեղի ամբողջականության խախտումով /արտահայտված պարեզներ 2 կամ ավելի ծայրանդամների, պարապլեգիա, հեմիպլեգիա, տրիպլեգիա, տետրապլեգիա/.
- 11) ծանր գանգուղեղային վնասվածքներ՝ ուղեկցվող հոգեկան կամ նյարդաբանական արտահայտված համախտանիշներով, հոգեկան կամ շարժողական ֆունկցիայի արտահայտված խանգարումով դեֆիցիտով:

10. Սույն կարգի 9-րդ կետում նշված գումարը վճարվում է զինծառայողի կողմից Համապատասխան պետական մարմնին ներկայացված դիմումի հիման վրա՝ զինծառայողին կամ վերջինիս կողմից ներկայացված դիմումում նշված այլ շահառուին:

11. Եթե Օրենքով շահառու ճանաչված անձը ստացված վնասվածքների կամ խեղման հետևանքով առաջացած ֆիզիկական, մտավոր կամ հոգեկան անկարողության պատճառով չի կարող ներկայացնել դիմում, ապա սույն կարգի 9-րդ կետում նշված գումարը վճարվում է զինծառայողի ընտանիքի անդամ հանդիսացող շահառուին (շահառուներին), որը (որոնք) նշվում են

Համապատասխան պետական մարմնի կողմից Հիմնադրամին ներկայացված գրավոր տեղեկացման մեջ:

12. Սույն կարգի 9-րդ կետում նշված գումարը վճարելու մասին որոշումը Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը կայացնում է Համապատասխան պետական մարմնից գրավոր տեղեկացումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Սույն կարգի 9-րդ կետում նշված՝

1) գումարը վճարվում է, ոչ ավելի քան 6 ամսվա համար.

2) գումարի առաջին ամսվա համար վճարումը կատարվում է Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման մարմնի կողմից այդ գումարը վճարելու մասին որոշումը կայացնելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

3) գումարի յուրաքանչյուր հաջորդ ամսվա համար վճարումը կատարվում է այդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում.

14. Սույն կարգի 9-րդ կետում նշված գումարի վճարումները դադարեցվում են՝ ստորև նշված՝ առաջինը տեղի ունեցած դեպքերից որևէ մեկի առկայության պարագայում՝

1) լրացել է այդ գումարը վճարելու 6 ամսյա ժամկետը.

2) զինձառայողը մահացել է կամ ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ և Օրենքով շահառու.

3) զինձառայողը չի ճանաչվել Օրենքով շահառու:

15. Եթե սույն կարգի 9-րդ կետում նշված գումարի վճարումները դադարեցվում են՝

1) այն հիմքով, որ զինձառայողը մահացել է կամ ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ և Օրենքով շահառու, ապա նախապես վճարված գումարները նվազեցվում են այդ զինձառայողին (շահառուին) վճարման ենթակա միանվագ գումարից.

2) այն հիմքով, որ զինձառայողը չի ճանաչվել Օրենքով շահառու, ապա նախապես վճարված գումարները զինձառայողից կամ այլ շահառուից ետ չեն պահանջվում և

դիտվում են որպես Հիմնադրամի ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնասը պատճառվել է՝

- ա. զորամասը կամ ծառայության վայրը ինքնական թողնելու կամ
- բ. դասալքության կամ
- գ. կամովին գերի հանձնվելու կամ
- դ. մարտադաշտն ինքնական լքելու կամ
- ե. զինծառայողի կողմից այլ իրավախախտում թույլ տալու հետևանքով:

16. Նախապես վճարված գումարները ետ պահանջելու հիմքերի առկայության դեպքում, այդ գումարները կարող են Հիմնադրամի կողմից գանձվել դատական կարգով կամ կամովին վերադարձվել զինծառայողի կամ այլ շահառուի կողմից:

17. Եթե Հիմնադրամը վճարել է Սույն կարգի 9-րդ կետում նշված գումարները և հետագայում բացահայտվել է, որ սույն կարգի 7-րդ կետում նշված գրավոր տեղեկացմանը նախորդող գործընթացները իրականացվել են ՀՀ օրենսդրության խախտմամբ, ապա Հիմնադրամն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր եղանակներով ետ պահանջել Հիմնադրամի կողմից վճարված բոլոր անհիմն գումարները:”

2. Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“1) Հիմնադրամը Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված միանվագ գումարը փոխանցում է շահառու(ներ)ի համար բացված բանկային հաշվին՝ այդ գումարից նվազեցնելով սույն կարգին համապատասխան նախապես վճարված գումարները, եթե այդպիսիք առկա են.”

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: